

**ՀՀ ֆինանսների նախարարություն**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/4**

**29 մայիսի 2014 թ.**

Քննարկվեց «Տրդատ-Շ» ՍՊԸ 15.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 11.04.2014 թ-ի թիվ 2128941 ստուգման ակտի դեմ:

**«Տրդատ-Շ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Սույն թվականի մարտի 18-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում Շենգավիթի ՀՏ պետի 13.03.2014 թ-ի թիվ 2128941 հանձնարարագրով «Տրդատ-Շ» ՍՊԸ-ում անցկացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Ստուգման արդյունքներով 11.04.2014 թ-ին կազմվել է թիվ 2128941 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որում արձանագրված խախտումների մի մասը չի համապատասխանում իրականությանը: Բացի այդ, ստուգման ակտը կազմվել է խախտելով ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի «Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանելու մասին» թիվ 11259-Ն որոշմամբ սահմանված կարգը:

Ստուգման ընթացքում հայտնաբերվել է «Տրդատ-Շ» ՍՊԸ-ում երկու աշխատող, որոնց աշխատանքի ընդունման հրամանները ստուգման պահին չէին տրվել: Միաժամանակ ստուգող տեսուչների կողմից որպես «Տրդատ-Շ» ՍՊԸ աշխատող են ներկայացվել ստուգման պահին շինարարական աշխատանքների կատարման օբյեկտում աշխատող ևս երկու աշխատող (ըստ ստուգման ակտի Օհանյան Արտաշեսը և Մկրտչյան Անդրանիկը), որոնք պատվիրատուի և «Բարսիս» ընկերության միջև կնքված պայմանագրի շրջանակներում տեղադրում էին կախովի առաստաղ:

Ստուգող տեսուչների հարցին ի պատասխան այդ աշխատողները հայտարարել են, որ հանդիսանում են այդ ընկերության աշխատողները և իրենք «Տրդատ-Շ» ընկերության հետ որևէ առնչություն չունեն:

Հիմնավորման համար, որ կախովի առաստաղ տեղադրող վերը նշված երկու ֆիզիկական անձինք «Տրդատ-Շ» ՍՊԸ աշխատակիցները չեն, ստուգող տեսուչներին ներկայացվել է պատվիրատուի հետ կնքած պայմանագիրը, պայմանագրով նախատեսված աշխատանքների ծախսերի նախահաշիվը և ծախսերի նախահաշվի գումարով հարկային հաշիվը: Այդ երեք փաստաթղթերով հիմնավորվել է, որ կախովի առաստաղները չեն տեղադրվելու «Տրդատ-Շ» ՍՊԸ կողմից: Ընդհակառակը, նախահաշվի ստորին մասում տեղեկատվության կարգով նշված են եղել «Իդեալ» ընկերության գները (նախահաշվի կնքման պահին, ենթադրվել է, որ պատվիրատուն այդ ապրանքները ձեռք է բերելու այդ ընկերությունից):

Շինհրապարակում աշխատող ֆիզիկական անձանց «Տրդատ-Շ» ՍՊԸ-ի աշխատողները հանդիսանալու փաստը ստուգում իրականացնող տեսուչների կողմից չի հիմնավորվել ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված կարգով: Մասնավորապես, ստուգող տեսուչների կողմից չեն վերցվել որոշմամբ նախատեսված հայտարարությունը և չի պահպանվել չգրանցված աշխատողների արձանագրման ընթացակարգը:

Որպես կախովի առաստաղ տեղադրող ֆիզիկական անձանց «Տրդատ-Շ» ընկերության աշխատողներ հանդիսանալու փաստը «հիմնավորվել է» այն հանգամանքով, որ հարկային մարմնի տվյալների բազայում բացակայում են «Բարսիս» ընկերության կողմից ներկայացված այդ ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալներ: Շինարարական օբյեկտում ստուգման պահին կարող էին շինարարական աշխատանքներ իրականացվել նաև այլ ընկերությունների կողմից: Այն հանգամանքը, որ վերագրյալ աշխատանքներում ներգրավված ֆիզիկական անձանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ տեղեկություններ այդ ընկերությունների կողմից չեն ներկայացվել չի կարող հիմք հանդիսանալ եզրակացության համար, որ այդ ֆիզիկական անձինք հանդիսանում են «Տրդատ-Շ» ՍՊԸ աշխատակիցները:

Ստուգման ակտով որևէ կերպ չի հիմնավորվել, որ շինարարական օբյեկտում կախովի առաստաղ տեղադրող ֆիզիկական անձինք հանդիսանում են ընկերության աշխատակիցները: Ընկերությունը չի կարող պատասխանատվություն կրել այն բանի համար, ինչն ընկերության հետ որևէ առնչություն չունի:

Հաշվի առնելով վերը նշվածն ընկերությունը խնդրում է վերանայել ստուգման ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ «Տրդատ-Շ» ՍՊԸ-ում թվով 4 (չորս) վարձու աշխատող ձևակերպված չէր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, չէր կատարվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14 և 85 հոդվածների պահանջները, որի համար նախատեսված է պատասխանատվություն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 5-րդ կետի հատկանիշներով, այն է՝ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու դեպքում գործատուն (այդ թվամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող) տվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է վճարում է 150.000 (հարյուր հիսուն հազար) դրամ եկամտային հարկ: Այսպիսով վճարման ենթակա է 600.000 դրամ 4 (չորս) չձևակերպված վարձու աշխատողի համար:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 28.03.2014 թ-ին ստուգող անձանց կողմից կազմվել է ՀՀ կառավարության 2013 թ-ի հուլիսի 25-ի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված ձևի արձանագրություն, որի համաձայն Մանյա Գևորգյանի, Հովհաննես Ավագյանի, Արտաշես Օհանյանի և Անդրանիկ Մկրտչյանի աշխատանքի ընդունումը գործատուի («Տրդատ-Շ» ՍՊԸ-ի) կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէ:

Տվյալ դեպքում «Տրդատ-Շ» ՍՊԸ տնօրենը վերը նշված չորս անձանցից ընդունում է միայն երկուսի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չլինելու հանգամանքը: Մասնավորապես, ըստ «Տրդատ-Շ» ՍՊԸ տնօրենի, Արտաշես Օհանյանը և Անդրանիկ Մկրտչյանը չեն հանդիսանում «Տրդատ-Շ» ՍՊԸ-ի աշխատակիցները և ընկերության հետ որևէ կապ չունեն:

Ստուգումն իրականացրած անձինք նշեցին, որ ստուգման ընթացքում Արտաշես Օհանյանը և Անդրանիկ Մկրտչյանը ներկայացել են որպես «Բարսիս» ընկերության աշխատակիցներ և պարտավորվել են ներկայացնել այդ փաստը հիմնավորող համապատասխան ապացույցներ, սակայն այդպես էլ չեն ներկայացրել:

Ստուգող անձինք նշեցին նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Արտաշես Օհանյանը և Անդրանիկ Մկրտչյանը «Բարսիս» ընկերության աշխատակիցներ չեն հանդիսանում: Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել Արտաշես Օհանյանին և Անդրանիկ Մկրտչյանին որպես «Տրդատ-Շ» ՍՊԸ աշխատակիցներ դիտարկելու համար:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչությունում Արտաշես Օհանյանը 13.05.2014 թ-ին տվել է բացատրություն:

13.05.2014 թ-ին բացատրությունում Արտաշես Օհանյանը մասնավորապես նշել է, որ որևէ կազմակերպությունում չի աշխատում: Գումար վաստակելու նպատակով այցելում է տարբեր շինարարական հրապարակներ և առաջարկում իր ծառայությունները, որն իրենից ներկայացնում է լամինատե հատակ կամ կախովի առաստաղ հավաքելը:

Ինչ վերաբերվում է ք.Երևան, Տիգրանյան 27 հասցեում իրականացված գործունեությանը, ապա Արտաշես Օհանյանը նշել է հետևյալը: Նկատելով, որ նշված հասցեում իրականացվում են շինարարական աշխատանքներ, մոտեցել է բանվորներին և հարցրել ազատ աշխատատեղի համար: Այնուհետև իրեն է մոտեցել Վազգեն անունով մի տղամարդ, որն առաջարկել է կախովի առաստաղների հավաքման աշխատանք: Հաջորդ օրը Արտաշես Օհանյանը սկսել է աշխատանքը, որը տևել է երեք օր: Հաշվի առնելով կատարվող աշխատանքների ծավալը (մոտ 300 ք.մ.) Արտաշես Օհանյանն իր հարևան Անդրանիկ Մկրտչյանին առաջարկել է, որ գա և օգնի իրեն: Ըստ Արտաշես Օհանյանի, իր կողմից կատարվել է միայն աշխատանքի մի մասը՝ մոտ 50 ք.մ. և կատարված աշխատանքի դիմաց գումար չի ստացել:

Բացատրությունն վերցրած հարկային ծառայողի Արտաշես Օհանյանին ուղղված հարցին, թե վերջինս ինչ կապ ունի «Տրդատ-Շ» ընկերության հետ և ում է ճանաչում այդ ընկերությունից, տրվել է պատասխան, որ առաջին անգամն է լսում այդ ընկերության մասին և որևէ մեկին չի ճանաչում: Ըստ Արտաշես Օհանյանի բացատրության, ստուգող տեսուչների այցելությունից հետո նա այլևս Տիգրանյան 27 հասցե չի գնացել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ սույն գործում առկա ապացույցները հիմնավորում են, որ Արտաշես Օհանյանը և Անդրանիկ Մկրտչյանը չեն հանդիսացել «Տրդատ-Շ» ՍՊԸ-ի աշխատակիցները: Հետևապես, ստուգման ակտով նշված անձանց գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները ենթակա են նվազեցման:


Ղեկավարվելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով ստուգման ակտից ենթակա է նվազեցման 480.000 դրամ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 11.04.2014 թ-ի թիվ 2128941 ստուգման ակտի 1-ին կետից նվազեցնել 480.000 դրամ:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**